# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 17 >> դեկտեմբերի 2015 թվականի N 128 ք.Գյումրի

ՍԱՀԱԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ, 163-րդ հոդվածների, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Սահակ Մինասյանի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին տրամադրել 2014 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը:
2. Ամենամյա արձակուրդի տևողությունը 7 աշխատանքային օր՝ 2015 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2016 թվականի հունվարի 15-ը ներառյալ:
3. Հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:
4. Ամենամյա արձակուրդի ընթացքում աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության կրթության բաժնի պետ Գևորգ Ղումաշյանին:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

*Իսկականի հետ՝ ճիշտ է՝*